ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵՈՐԵՔՉՅԱՆԻ 1943 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՌՄ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ

Մոսկվա, Կրեմլ,

ԻՈՍԻՓ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Մեծարգո Իոսիփ Վիսսարիոնովիչ:

Ձեր հանճարեղ ղեկավարությամբ և Ատծո ողորմածությամբ կարմիր Բանակը հաղթականորեն ջախջախում է արյունռուչ և ատելի թշնամուն, վռնդելով նրան մեր սրբազան հողից: Կարմիր Բանակի շարքերում, ՍՍՌՄ մյուս ժողովուրդների հետ միասին, մեր հայրենիքի թշնամիների դեմ հերոսաբար մարտնչում են նաև հայ ժողովրդի զավակները:

Կատարելով իմ պարտքը հայրենիքի հանդեպ, աղոթում եմ Ամենաբարձրյալին՝ սովետական զինքի հաղթության համար, վառապանծ կարմիր Բանակի հզորությունն էլ ավելի ուժեղացնելու և թշնամու վերջնական ջախջախումն արագացնելու համար: Էջմիածնի կաթուղիկոսարանը «Մասունցի Դավթի» անվան տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին հատկացնում է բրիլիանտներով զարդարված մի թանկարժեք պանակ և այլ թանկարժեք իրեր պլատինից ու բրիլիանտներից՝ ավելի քան 800 հազար ռուբլի արժողությամբ, 1000 անգլիական ֆունտ ստերլինգ և 50 հազար ռուբլի:

Խնդրում եմ Ձեր կարգադրությունը՝ ՍՍՌՄ Պետբանկում հատուկ հաշիվ բանալու մասին:

Միաժամանակ հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհիս բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Մասունցի Դավթի» անվան տանկային շարասյան կառուցմանը: Լիովին հավատացած եմ, որ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայերը կարձագանքեն մեր հովվական կոչին, ինչպես արձագանքեցին պատերազմի սկզբին մեր կոնդակին, կազմակերպելով հայկական բոլոր զաղութներում կարմիր Բանակին և տուժած բնակչությանն օգնելու կոմիտեներ, որոնք հավաքեցին և ուղարկեցին ավելի քան 15 հազար դոլլար ու ներկայումս շարունակում են իրենց գործունեությունը:

Թանկագին Իոսիփ Վիսսարիոնովիչ, *ընդունեցեք մեր օրհնությունը և հավատացյալ հայերի ու հոգևորականության ողջույնը:*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵՈՐԵՔՉՅԱՆ